«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ

ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում
ԱՌԱՐԿԱ	Դասվար
ՀԵՂԻՆԱԿ	Անահիտ Գալստյան
ՄԱՐԶ	Արարատ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Արարատ քաղաքի N4 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն……3
2. Գլուխ 1. Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում……4-11
3. Գլուխ 2. Արժեքային համակարգի դասավանդման օրինակ ……12-14
4. Եզրակացություն……15-16
5. Օգտագործված գրականության ցանկ……17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արժեքները բավարարում են սուբյեկտի կենսական պահանջմունքները և իմաստավորում են կյանքը: Սուբյեկտի արժեքները միավորվելով կազմում են մի ամբողջական համակարգ: Անձի մասին կարելի է դատել նրան առավել բնորոշ արժեքներով, որոնք ձևավորում են անձի ներաշխարհը: Իսկ ինչ վերաբերում է ազգային արժեքներին, դրանք բախտորոշ նշանակություն ունեն և ձևավորվում են պատմական զարգացման ընթացքում, կազմում ներկա կեցության հիմքը և բնականոն գոյության ու անխափան զարգացման երաշխիքը: Ազգին հատուկ արժեքներն արտացոլվում են նրա ինքնագիտակցության տարբեր ձևերում՝ արվեստի, փիլիսոփայության, բարոյականության, կրոնական պատկերացումների, բանահյուսության մեջ: Ազգի արժեհամակարգը պետք է յուրացնի յուրաքանչյուր անհատ հանրության մեջ բնականոն գործելուհամար:

Թեմայի կարևորությունը: Թեման բավական կարևոր է, քանի որ ճիշտ արժեհամակարգ ձևավորելը շատ կարևոր գործընթաց է: Դաստիարակենք արժանապատիվ, ազնիվ և հայրենասերսերունդ, կունենանք առողջ հասարակություն և պետականության ամուր հիմքեր, բաց թողնենք ճիշտ արժեքների սերմանումը, կունենանք վատ հասարակություն: Սա է պատճառը, որ արժեքային համակարգի դասավանդումը շատ կարևոր է:

Աշխատանքի նպատակը: Աշխատանքում նպատակ է դրվել վեր հանել արժեքային համակարգի կարևորությունը և առանձնացնել դասավանդման առավել արդյունավետ մեթոդները: Աշխատանքում ներկայացրել ենք ուսուցչի դերը տվյալ դասավանդման գործընթացում, ներկայացրել ենք դասի պլան արժեքային համակարգի դասավանդման մեթոդիկայով և ներկայացրել ենք դասի ընթացքում օգտագործվող հետաքրքիր հնարները:

ԳԼՈՒԽ 1. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես անգնահատելի է լեզվի և գրականության դերը առանց նույնիսկ էականորեն տարաբաժանելու մայրենի և օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ:

Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունեն ուսուցանվող օտար լեզուները, որով ստեղծված համաշխարհային նշանակության գրական կոթողներն ունեն սերունդ կրթելու և մարդկային հատկանիշներով նրանց դաստիարակելու հսկայական ներուժ: Ահա թե ինչու հանրակրթական դպրոցում օտարլեզվի և գրականության դասավանդումը դուրս է գալիս սոսկ օտար լեզու և օտար մշակույթ ուսուցանելու նեղ շրջանակից և վերածվում է սովորողների գեղագիտական, բարոյական, հոգևոր արժեհամակարգը ձևավորելու մի միջոցի, որի դերը չպետք է թերագնահատել:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական,

դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում[1]: «Եթե դուք կարող եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դաժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնություն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը»:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն[2]: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում,ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկ-

[1]Բաբանսկի Յու.Կ, Աշակերտների դաստիարակությունը կոմպլեքսային մոտեցում, Երևան 1987թ. էջ 12

[2]Մուդրիկ Ա.Վ., Դորոցական անձը և նրա դաստիարակությունըկոլեկտիվում,Երևան 1986, էջ

ման ընդունակություններ:

«Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ»: Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ՝ արժեքներ ձևավորելը: Արժեքային կրթությունն իսկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: Մեզանում արժեքային կրթության նկատմամբ ավանդաբար ընդունված է հետևյալ մոտեցումը. դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգությունը փոխանցել նոր սերնդին՝ նրանց մեջ լավ արժեքներ սերմանելով և հաստատելով բարոյական այլևայլ հատկանիշների ճշմարտացիությունը:

Արժեքային կրթության նոր՝ արևմտյան մանկավարժության մեջ մշակված մոտեցման հիմքում մտածական հմտությունների ձևավորման սկզբունքն է: Ըստ սրա՝ աշակերտներին պետք է օգնել իմաստավորելու որոշակի արժեքներ, այսինքն՝ նրանց պետք է խրախուսել սեփական կենսափորձի և զանազան հարցադրումների միջոցով որոշել, թե իրենք ինչպիսի մարդ են ուզում դառնալ, ինչպիսի ավանդույթներ արժե պահպանել: Ուստի շատ կարևոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել դասագրքերի նյութերին, ինչպես նաև ներկայացված հերոսների վարքագծի վերլուծությանը և դրա միջոցով որոշակի արժեքների բացահայտմանը: Սակայն վերլուծությունը ենթադրում է առաջին հերթին երեխաների գործուն մասնակցություն, այսինքն՝ աշակերտները պետք է հնարավորություն ունենան ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը, զգացմունքները, որոշակի հարցադրումներ անելու, ընկերների հետ քննարկելու, դատողություններ անելու հերոսների վարքագծի մասին, գնահատելու և իրենց համար բացահայտելու այս կամ այն արժեքը[3]:

	II դասարան	III դասարան	IV դասարան
Դասի նպատակը	Դաստիարակող նպատակ՝ արժեքային համակարգ		
	1.Ընթերցասիրություն, հարգանք գրքի նկատմամբ: **2.**Գեղեցիկը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողություն: **3.**Ինքնուրույն աշխատանքով իր հետաքրքրությունները բավարարելու ձգտում: **4.**Ձևավորել սեփական անձի գնահատում և վստահություն իր ուժերին: **5.**Իր ազգային պատկանելության գիտակցում: **6.**Հարգանք դիմացինի արժանապատվության և ինքնության նկատմամբ:	**1.**Ընթերցասիրություն, հարգանք գրքի նկատմամբ: **2.**Գեղեցիկը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողություն: **3.**Ինքնուրույն աշխատանքով իր հետաքրքրությունները բավարարելու ձգտում: **4.**Ձևավորել սեփական անձի գնահատում և վստահություն իր ուժերին: **5.**Իր ազգային պատկանելության գիտակցում: 6.Հարգանք դիմացինի արժանապատվության և ինքնության նկատմամբ:	**1.**Ընթերցասիրություն, հարգանք գրքի նկատմամբ: **2.**Գեղեցիկը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողություն: **3.**Ինքնուրույն աշխատանքով իր հետաքրքրությունները բավարարելու ձգտում: **4.**Ձևավորել սեփական անձի գնահատում և վստահություն իր ուժերին: **5.**Իր ազգային պատկանելության գիտակցում: **6.**Հարգանք դիմացինի արժանապատվության և ինքնության նկատմամբ: **7.**Բարին, մարդկայինը տեսնելու և գնահատելու կարողություն:

[3]Պետրոսյան Ա., Հայրենասիրությունը որպես սակավակազմ դպրոցների աշակերտների սոցիալականացման կարժեհամակարգի ձևավորման գործոն, Երևան 2018, էջ 212

Արժեքային համակարգի դաստիարակության տեխնոլոգիայի հեղինակն է Ա.Ի.Շեմշուրինան: Այս տեխնոլոգիան ուղղված է սովորողների բարոյական

արժեհամակարգի ձևավորմանը: Հարկ է արձանագրել, որ դասագործընթացում են ակներև դառնում սույն տեխնոլոգիայի կիրառման վերջնարդյունքները, քանզի առարկան ամբողջությամբ՝ իր դաստիարակչական ներուժով հանդերձ սովորողների բարոյական արժեհամակարգի ձևավորման հզոր գործոն է: Այս նկատառումներից ելնելով էլ սահմանվել են բարոյական դաստիարակության տեխնոլոգիայի հայեցակարգային դրույթներն ու արժեքային կողմնորոշիչները: Դրանք են՝

- սովորողների մոտ հայրենասիրության դաստիարակումը,
- սովորողների քաղաքացիական գիտակցության ձևավորումը,
- սովորողների իրավունքների և պարտականությունների համակարգումը,
- սովորողների մոտ բնության և շրջապատող աշխարհի հանդեպ խնայողան և հանդուրժող վերաբերմունքի դաստիարակումը:

Դասագործընթացում դաստիարակչական խնդիրների լուծման տեխնոլոգիաները ներառում են հետևյալ համակարգաձևավորող բաղադրիչները.

- Դասի նպատակադրում, թեմայի մատուցման փոխներգործուն մեթոդների և օժանդակող միջոցների նախագծում,
- Դասատեսակի ընտրություն և նրա կառուցվածքային տարրերի համակարգում,
- Սովորողների միջև համագործակցային բնույթի աշխատանքների կազմակերպում,
- Սովորողների իմացական և ճանաչողական գործունեության խթանում,
- Սովորողների հույզերի կառավարում, զգացմունքների ղեկավարում և վարքի դրսևորման ձևերի վերահսկում:

Արժեքային համակարգի ձևավորման դասագործընթացում դաստիարակչական խնդիրների լուծման տեխնոլոգիաների բովանդակությունը ներառում է՝

- առաջացած դաստիարակչական իրավիճակի վերլուծությունը, լուծման ուղիների որոնումը,
- մանկավարժական աջակցությունը,
- հաջողության դիրքորոշման ստեղծումը:

Արժեքային համակարգի ձևավորման դասագործընթացում առաջացող դաստիարակչական խնդիրների լուծման գործընթացում հակադիր կողմերի միջև առաջացած հոգեկան լարվածության թուլացման նպատակով արդյունավետ է կիրառել

դաստիարակչական հետևյալ տեխնոլոգիաները.

- Խմբային
- Խաղային,
- Հաղորդակցական-վարժանքային,
- Հաջողության դիրքորոշման,
- Զևավորող դաստիարակչական,
- Մտավոր գործողությունների ձևավորման:

Դասագործընթացում առաջացող դաստիարակչական բնույթի խնդիրների լուծման նպատակով վերոգրյալ բոլոր մեթոդների և տեխնոլոգիաների արդյունավետ կիրառումը դասավանդողից պահանջում է փուլային մոտեցում[4]:

Նախ անհրաժեշտություն է առաջանում կատարել ստեղծված իրադրության և առաջացած խնդիրների պատճառների բովանդակային ախտորոշում, ինչի արդյունքում բացահայտվում է խնդրի առաջացման շարժառիթը, վերլուծվում հակամարտող կողմերի նախատրամադրվածությունն ու դիրքորոշումները, հստակեցվում լուծումների հասնելու մեթոդական և տեխնոլոգիական գործիքակազմը, ստեղծվում են դրանց կիրառման համար բարենպաստ մանկավարժական պայմաններ: Երկրորդ, որոշակիացվում է խնդրի լուծման դաստիարակչական նպատակը: Երրորդ, դասավանդողի կողմից դրսևորվում են որոշակի ռեֆլեքսիվ գործողություններ, որոնց համապատասխան, առաջացած խնդրի լուծմաննպատակով, նա կարողանում է օգտագործել նաև գործընկերների արդյունավետ նորարարական փորձը: Այնուհետև անցում է կատարվում շտկման և կարգավորման փուլին, որում, ելնելով ստացված արդյունքներից, չափվում է դասավանդողի մասնագիտական գործիմացության մակարդակը, ինչը ենթադրում է դաստիարակչական տարբեր իրադրություններում դասավանդողի և սովորողների միջև արդյունավետ փոխներգործություն: Դասագործընթացումառավել հաճախ այդ

[4]Եփրիկյան Ա., Մեթոդական ձեռնարկ, Երևան 2019, էջ 25

իրավիճակները մոդելավորում է դասավանդողը՝ հետապնդելով իրադարձությունների, փաստերի, երևույթների, դեմքերի և դեպքերի ներգործության ներքոդաստիարակող և ձևավորող միջավայր ստեղծելու նպատակ: Հատկանշական է

նաև, որ դաստիարակչական բնույթի յուրաքանչյուր խնդիր ծագում է այս կամ այն օբյեկտի շուրջ, որը կարող է իրենից ներկայացնել ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր արժեք, ինչպես նաև լինել դասավանդողի կամ սովորողների որևէ ոլորտում դրսևորվող, միմյանց հետ չհամընկնող կամ հակասող հետաքրքրությունների, դիրքորոշումների, կարծիքների, ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունք[5]:

Դասավանդման մեր փորձից ելնելով կարող ենք ասել, որ պատմության գործընթացում առաջացող դաստիարակչական խնդիրները հիմնականում կրում են գործունային, վարքագծային և միջանձնային բնույթ: Դաստիարակչական գործունային խնդիրները որպես կանոն առաջանում են սովորողների կողմից այս կամ այն առաջադրանքը չկատարելու, հաճախակի բացակայությունների և պատասխանատվության զգացումի բացակայությունից: Դաստիարակչական վարքագծային խնդիրներն առավել հաճախ առաջանում են սովորողների անբավարար վարքի հետևանքով:

Ելնելով մեթոդիստներ Բ. Տ. Լիխաչովի, Էլիոտ Արոնսոնի, Ա. Մ. Տիմոշենկոյի, Ա. Ֆուրնհամի և Տ. Յազդանպանայի՝ այս ոլորտում կատարած հիմնարարար հետազոտություններից, կարող ենք առանձնացնել պատմության դասագործընթացում առաջացող դաստիարակչականխնդիրների լուծման տարբեր փուլերում մեր կողմից ընտրված դաստիարակչական տեխնոլոգիաների թիրախային գործադրման մակարդակները:

Իմ կարծիքով դաստիարակչական տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկատվության էմպիրիկ ընկալման, յուրացման և վերարտադրման գործընթացով դրսևորվում է դրանց ընտրության և թիրախային կիրառման հարմարվողական–վերարտադրողական մակարդակը: Ուստի, դասավանդողը, ծանոթանալով դաստիարակչական տեխնոլոգիաների տեսական հիմքերին, կարողանում է առանձ-

[5]Ասատրյան Լ.,Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն.ուսումնական ձեռնարկ, Երևան 201

նացնել ոչ միայն դրանց կիրառման տեխնիկան, այլև ստեղծում է բարենպաստ մանկավարժական պայմաններ, այնուհետև դրսևորվում է դրանց ընտրության և թիրախային կիրառման կառուցողական-վերլուծական մակարդակը: Իսկ ահա ստեղծագործական–նորարարական մակարդակում դասավանդողը տիրապետում է դաստիարակչական տեխնոլոգիաների էությունը բացահայտելու, դաստիարակչական խնդիրն ախտորոշելու, լուծելու և ստացված արդյունքները ստեղծագործաբար օգտագործելու գործընթացներին:

ԳԼՈՒԽ 2.ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՕՐԻՆԱԿ

Դասարանը՝ 2-րդ

Առարկան՝ Ես և շրջակա աշխարհը

Դասի թեման՝ «Ես և իմ դասընկերները»

Դասի ուսուցանող նպատակը. Իմանան ընկերության գաղտնիքները, լինեն նրբանկատ, ներողամիտ:

Վերջնարդյունք-Կկարողանան գնահատել և օգնել ընկերներին:

Արժրորեն՝ ընկերասիրությունը, ազնվությունը, գաղտնապահությունը, հավատարմությունը, պատրաստակամությունը:

Դասի զարգացնող նպատակը. Ընդունել ընկերներին այնպիսին, ինչպիսին որ կան:

Դասի դաստիարակչական նպատակը. Այս դասընթացը աշակերտներին փոխանցում է ընկերասիրության գաղափարը: Այս դասի ընթացքում աշակերտնորին կարելի է փոխանցել ազնվության, նվիրվածության, հավատարմության արժեքները: Դրանք շատ կարևոր են մարդու ձևավորման համար, ուստի անհրաժեշտ է այս ամենը երեխաներին սերմանել մանկուց: Ընկերասեր և ազնիվ մարդ ձևավորելով՝ ձևավորում ենք առողջ հասարակություն:

Դասի ընթացքը. Հարցերի օգնությամբ ամփոփել հին դասը: Նոր դասը սկսել մտագրոհով: Գրատախտակին նկարել արև, արևի մեջ գրել ընկեր բառը, իսկ շողերին՝ ընկերության մասին այն բառերը, որոնք կասեն աշակերտները: Այսպիսով կպարզենք, թե աշակերտներն ինչ են մտածում ընկերության մասին:



Այնուհետև ծանոթանալ դասի բովանդակությանը: Ընթերցել Յուրի Սահակյանի «Պայման» բանաստեղծությունը: Վերլուծել և վեր հանել բանաստեղծության հիմնական միտքը:

T-աձև աղյուսակի օգնությամբ աշակերտները կորոշեն լավ և վատ ընկերների տարբերությունները, արժանիքները և թերությունները:

Լավ ընկեր	Վատ ընկեր

Դասի վերջում արդյունավետության և աշակերտների կարծիքներն իմանալու նպատակով բաժանվեցին ընկերության մասին երեք հարց պարունակող հարցաթերթիկներ:

Կարդալով հարցաթերթիկները՝ կարելի է եզրակացնել, որ աշակերտները նշել էին իրենց անկեծ պատասխանները, որից պարզ երևում էր, որ իրենք հասկացել էին, թե ինչ է ընկերությունը և ընկերասիրությունը։

Այսպիսով արժեքային համակարգի դասավանդումը շատ կարևոր է դասավանդման գործընթացում։ Աշակերտներին անհրաժեշտ է դաստիարակել արժանապատիվ, ընկերասեր և ազնիվ մարդիկ։ Դաստիարակելով ազնիվ և ընկերասեր աշակերտ՝ արդյունքում կունենանք ամուր հիմքերով ապագա և հայրենիքին պիտանի հոգատար սերունդ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ասա՝ ով է ընկերդ, ասեմ՝ ով ես դու». այս խոսքերը լավագույնս կբնութագրեն այս թեման: Թեմայի դասավանդման ընթացքում աշակերտներին համապատասխան օրինակով տալիս ենք հիմնարար գիտելիքներ և կարողություններ, որոնք անհրաժեշտ են հասարակությանը պիտանի անհատ ձևավորելու համար:

Արժեք-արժանիքների ըմբռնումը կարևոր է անհատ-հասարակություն փոխհարաբերությունների կարգավորման առումով: Բոլոր անձնային հատկությունները հանդիսանում են տվյալ անձի արժանիքները, մասնավորապես ընկերասիրություն, ազնվություն, նվիրվածություն: Հայրենասեր, նվիրված, ընկերասեր անհատի ձևավորումը չափազանց կարևոր է հայրենասեր սերունդ, անհատ դաստիարակելու առումով: Պետք է տարբերակել արժանիքներ հասկացողությունը, որում առանձնանում է ազգային-պետական միաբանության ապահովումը:

Ընկերասիրությունը այն գեղեցիկ և հաճելի զգացողություններից է, որը պետք է ունենալ և պահպանել միշտ: Ընկերները նրա համար են, որ միշտ օգնեն և աջակցեն միմյանց՝ յուրաքանչյուր հարցում, չլքեն միմյանց՝ անկախ ամեն ինչից.

-Արի այնքան ծանոթանանք,
Որ սկսենք մտերմանալ:
Հետո այնքան մտերմանանք,
Որ սկսենք ընկերանալ:
Հետո այնքան ընկերանանք,
Որ սկսենք եղբայրանալ:
Հետո այնքան եղբայրանանք,
Որ բաժանվել չկամենանք,
Ո՛չ խաղի մեջ, ո՛չ փորձանքում,
Ո՛չ էլ ամբողջ, ամբողջ կյանքում:

«Պայման»՝ Յուրի Սահակյան

Եթե բախտն առանձնապես բարեհաճ է մարդու նկատմամբ և ուզում է շնորհել նրան աշխարհում մեծագույն երջանկությունը, նրան հավատարիմ ընկեր է տալիս:

Հավատարմությունը պարզապես պատասխանատվությունն է ոչ թե սեփական եսիդ, այլ այլոց՝ մերձավորների համար նույնպես:

Արդարամտությունը այլոց ճշմարիտ, արդարացի գնահատումն է: Եթե արժանապատվությունը անձի հարգանքն է իր հանդեպ, ապա արդարամտությունը հարգանքն է ուրիշների հանդեպ: Այսպիսով արդարամտությունը ոչ միայն

անդրադառնում է մեր սեփական ինքնագնահատականի վրա, այլ նաև ազդում է դրա վրա։

Վերլուծելով թեման՝ կարելի է ասել, որ ընկերասիրության մեջ չափազանց կարևոր է լինել արդարամիտ, հավատարիմ և նվիրված։ Հատկանիշներ, որոնք պետք է ուսուցանել դեռ վաղ տարիքից և զարգացնել ողջ կյանքի ընթացքում։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Ասատրյան Լ., Մանկավարժական հետազոտություններիվ մեթոդաբանություն. ուսումնական ձեռնարկ, Երևան 2011, 179 էջ
- Բաբանսկի Յու.Կ, Աշակերտների դաստիարակությունը. կոմպլեքսային մոտեցում, Երևան 1987
- Եփրիկյան Ա., Մեթոդական ձեռնարկ, Երևան 2019
- Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան 2020
- Մուդրիկ Ա.Վ., Դպրոցական անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում,Երևան 1986
- Պետրոսյան Ա., Հայրենասիրությունը որպես սակավակազմ դպրոցների աշակերտների սոցիալականացման և արժեհամակարգի ձևավորման գործոն, Երևան 2018